ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
Տ Ն Օ Ր Ե Ն

«07» մայիսի 2024 թ. N331

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բալասյան,

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) իրականացնում է պետական բյուջեից ֆինանսավորվող «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագրերով նախատեսված աշխատանքները: Աշխատանքներն իրականացվում են Կազմակերպության և անասնաբույժ-մասնագետների միջև կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրերի հիման վրա: Անասնաբույժ-մասնագետներից շատերը, համաձայն ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածի, աշխատում են նաև որպես համայնքային անասնաբույժներ՝ վճարվելով համայնքային բյուջեից և, բացի վերը նշված ծրագրերով նախատեսված աշխատանքներից, իրականացնում են նաև այլ աշխատանքներ՝ բուժում, ախտահանություն, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի տրամադրում, անասնագլխաքանակի հաշվառում, հիվանդությունների կասկածի կամ գրանցման դեպքում դրանց տարածումը կանխարգելող աշխատանքներ և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանք, որ ՀՀ Կոտայքի մարզում միայն Բյուրեղավան համայնքը չունի հաստիքային անասնաբույժ՝ խնդրում եմ Ձեզ հնարավորության դեպքում Կազմակերպության հետ կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրով Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերը սպասարկող անասնաբույժ Արթուր Հովհաննիսյանին ընդունել աշխատանքի՝ որպես համայնքային անասնաբույժ, որն էլ

իր հերթին կբերի կենդանիների, կենդանիներից մարդկանց փոխանցվող հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անասնաբուժության և համարակալման
բաժնի գլխավոր մասնագետ Կ. Ավդալյան
Հեռ.՝ (012)59 59 39 (114)